ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Շաքարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Գուլգուլյանը, Ս. Գևորգյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը
Բացակա է՝ Լ. Գևորգյանը, Ա. Մարգարյանը

1. Գնանշման հարման՝ 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

(Է. Շաքարյան)

1.1 Փաստաթղթերի գնահատման՝
- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 10.09.2018թ.
-ժամը՝ 11:00

1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի տվյալների ճշտման մասին հարցում է կատարելվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, որի կողմից սահմանված ժամկետում տրամադրված եզրակացության համաձայն՝ Կոնսորցիումի մասնակից «Հ.Կ.Շ.Ի.Կ» ԲԲԸ-ի հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

1.2 Ընդունել ի գիտություն, որ «Հ.Կ.Շ.Ի.Կ» ՓԲԸ-ին և «Իշխանհատակ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Կոնսորցիում) օրենքով սահմանված ժամկետներում չի ներկայացրել որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

1.3 Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սույն գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ Կոնսորցիումը, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ 652640 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը, 43-րդ կետի 4-րդ ենթակետը, 44-րդ կետը, հրավերի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետը և 7.15-րդ կետը, որոշեց մերժել Կոնսորցիումի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ռադիկ Շին» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

1.5 Հանձնաժողովը որոշեց՝ գնահատման թերթիկները լրացնել և հանձնել քարտուղարին

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

1.6 Հիմք ընդունելով գնահատման թերթիկները հանձնաժողովը որոշեց հաստատել գնահատման արդյունքները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	տվյալները
3	Կոնսորցիում	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

1.7 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Ռադիկ Շին» ՍՊԸ-ի մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահող՝		Է. Շաքարյան
Անդամներ՝		Վ. Գուլգուլյան
		Ս. Գևորգյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան